



1843-1895 ՀԱՏՈՐ ԾԳ ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՀԻՆ ՀԱԽԱՏՔ ՀԱՅՈՑ

ՊԼ. Ժ. Գ. - ՊԱՇՏՈՄՈՒՆԻՔ, ՊԱՇՏՈՆԱՐԱՆԻՔ, ՊԱՇՏՈՆԵԱՅՔ, ՍՊԱՍՔ



(Տես յ'էջ 385)

Ակզբան զրոցս բացատրեցաւ, թէ ինչ է Պաշտօնն, որոյ կատարման կերպն և հանգամանքն՝ միանգամայն Պաշտաւմ առ զկ'ըստին, առանձին մասերն և ձեւերն՝ Եւս : Որչափ որ հետաքրննական է գիտնալն զատոնք, թէ և ոչ հարկաւոր, պաշտելաց հետ և այլ աւելի կորուսած մոռցուած են. բայց հարկ է թէ աւելի կամ նուազ մասամբ նման ըլլային Հայոց հեթանոսական ծէսքն այլ, իրենց մերձաւորացն. բայց ի պատմութենէ յիշուած չըլլալով՝ չեմք ուզեր օտարաց համար ըստածներն ի մէջ բերել. ուզողն կըրնայ գտնել ընդհանուր վիցարանութեան գրոց մէջ. միայն այնչափ յիշեմք՝ որչափ պաշտա-

մանց բառերն իսկ պահանջեն իմացուելու որոց գլխաւորն է,

Ա. ՊԱՇՏՈՆԱՐԱՆ. որ է ծանօթ կամ հասարակաց տեղի՝ ուր կատարուի պաշտօնն ազօթքով, պատարագով, զոհիւ, և պէսպէս արարողութեամբք կամ ծիսիւ : Յիշեցինք, որ նախահարք առաջ (եթէ իրենց տանց մէջ կատարէին ազօթքնին), զգալի և տեսանելի պաշտօնը՝ անշէնք բաց տեղերում կատարէին, եթէ իրենց ազարակն և դաշտն ըլլար, եթէ բարձրկէկ տեղ մի, և եթէ ծառոտ տեղուանք, անտառք և մայրիք : Յետինս յիշեցրէն մեզ Դից մայրի կոչուածն ի Վիշապաճոր, ի գաւառի Գաբեղինից՝ Երասխ գետոյ եզերքում՝ մօտ ի կաղզուան. ուր ձորոյն անունն այլ և ուրիշ յիշատակք՝ յայտնեն նշանաւոր կեդրոն մի դիցապաշտութեան : Տես և ինչ որ ծառոց պաշտաման

համար նախ ըսած եմք: — Բացօթեայ տեղոյ հակառակ՝ շատ մոլորահաւատք՝ որ և մոլորաբարք, գետնի երեսէն այլ վար կամ աւոր ծածուկ փոսերու և խորերու մէջ կ'ուզէին կատարել իրենց սնտիրը նա և զգուշելը, համեմատ իրենց խղճին, որ հեռանալով ի լուսոյ ճշմարտութենէ՝ մթութիւն կու սիրէ. ինչպէս տեսանք Քարանց պաշտաման մէջ, և ինչպէս գրէ մեր հին վարդապետաց մէկն այլ (ի խորհուրդ Եկեղեցւոյ). « Դեւքն խաւարամտէրք են, վասն այնու » ըրիկ և որ յանուն նոցա Բագիւնքն՝ շինեալք » էին և որ գետնափորո և ի խաւարին տունս. » քանզի համարձակ լիցին զեւքն՝ փայլաւ » տակմամբք և արհաւորք և ահագին վնդընչ » մամբ կեղծաւորել » : — Դից պաշտաման մէջ այլ տեսանք զխաւոր պաշտօնարաններ ի բաց և բնդարձակ տեղերում, որպէս ի Բագրեանդ և ի Յատիշատ. թէ արդեօք ընդհանուր անուամբ այն ատեն այլ այդպիսի տեղիք Պաշտօնարան կոչուէին, ինչպէս ի քրիստոնէութեան, և որպէս գրուի յԱլլաթա՛նդելու, չէ յայտ. այլ յայտնի են Տաճար և Մեհեան կոչմունք :

Առաջին անունն, որ չունի նմանութիւն նոյնանիշ բառից ուրիշ ազգաց, եթէ յատուկ հայկական անծանօթ իմաստով բան մի չէ, հաւանորէն զոյգ է պարսկերէն Թեճեր, յճճ որ ձմեռնատուն նշանակէ. և բնական է հետեւցընել որ ձմեռ ատեն կարելի չլլալով, մանաւանդ Հայոց երկրին պէս ձիւնապատ տեղ, կատարել զպաշտամունս, հարկ էր ծածկուած և շինուած տեղ մի, և ահա այս կըրնայ ըլլալ Տաճարն. (թողուլ ծագրական ստուգաբանութիւնն տայ-մար) : Հիմակուան կամ քրիստոնէական իմաստով՝ Տաճար նշանակէ՝ մեծ և վայելուչ շէնքով պաշտօնարան, այսինքն եկեղեցի (համեմատ Templum լատինաց), այլ և մեծ և ճոխ ապարանք, և նա եւ ուրախութեան, խնջոյից, կոչնոց ժողովարան և ճաշարան :

1. Աւելի ստուգութեան համար պէտք էր գիտնալ և մեր Տաճատ յատուկ մարդոյ աւուան ծագումը: Եթէ Tago բառն ինչպէս գրեն Էւրօպացիք՝ հին ատեն ըստ խաւաւացոց

Աւելի յատուկ անուն պաշտօնարանի մեր հին նախնեաց՝ երեւի Մեհեանն, և վկայութիւն իրմով բարդուածներն, (Մեհեներկալ, Մեհենապետ, Մեհեներարաք, Մեհեներագարդ, և այլն). որք ոչ միայն մեհենի պաշտօնեայն և ծէսերը գուշակել տան, այլ երբեմն և պաշտելին կամ դրօշալը, կամ թէ կուրքն իսկ Մեհեան կոչուի: Բառին ծագումն այլ ոչ հաւաստի, այլ հաւանական է՝ լուսնի Մահիկ և ըստ Պարսից մահ կոչմանէն. յորմէ երեւի և Մեհեկան ամիսն, քան թէ ի Միհրայ անուանէն. ըստ Հայնի մօտ է անոնց Մահիյնէ բառն՝ որ պարզ ամսական նշանակէ. յիշենք և մեր Մեհեկան ամիսը, իսկ ասոնցմէ հետեւցընելն և ստուգաբանելը թողումք ի կամ և ի գիտութիւն բանասիրաց. յիշեցընելով և մարդոյ յատուկ անունն Մեհեան, և Մեհեանեաց տոհմն՝ որ մեհենից պաշտօնատարութենէն առնուած է հաւանութն, բայց կըրնայ հին անծանօթ բառէ այլ ծագուիլ, ինչպէս Մեհեներգան. կան և Մեհաւայ, Մեհեր, Մեհրիար, բայց ասոնք աւելի նոր աստեաներ լուսին և յօտարաց եւ կամուտ երեւին :

Ենեղանեաց նուէրքն առ Դիւս՝ եթէ մերթելով և եթէ այրելով ըլլայ՝ ու յատուկ անուն մ'այլ պահանջէ, թէ ոչ բովանդակ պաշտօնարանի՝, գոնէ մէկ մասին, (ինչպէս մեր եկեղեցեաց մէջ այլ մատուռն և խորանն), կ'ըսուի Զոհարան և Զեհարան. գուցէ և Սպանդարան, որ նոյն կամ մօտ նշանակութիւնն ունի (մորթելու տեղ), և որոյ պաշտօնէից յատուկ եղաւ Սպանդարանն և տահմ, զորս վաղաքրակ կարգեց « ի վերայ Զենարանաց » , կ'ըսէ խորենացի՝ վէնայ բերդին մէջ փորուած սեղանակէն քարայրից, նոյնպէս և Բագառիճայ ի Դերշան, ինչուան հիմայ կ'երեւին պատերուն ներքեւ խողովակակերպ նեղ երկայն խորք, և կարծուին զոհից արիւնը թափելու համար.

կամ Անգղիացոց հնչէին և Սորուրացիք, որք այս անուամբ ճանչնային շատուած մի, իրենց՝ կրօնից պաշտամունք սովորեցընող, կըրնար այս քննութեան տակ ընկնալ. յիշելով այդ հին ազգին և Հայոց հին յարընչութեան կարծիքը :

ումանք ի տեսողաց՝ զեռ ցամբած արեան
մնացուած այլ կարծեր են նշմարել :

Բազմին. — Երբեմն մեհնանն իսկ այս-
պէս անուանի, բայց սովորաբար անոր գրչ-
խաւոր մասն, ուր որ կու գրուէր պաշտելին,
կուռնէ և զոհն. իբրեւ Սեղանն մեր եկե-
ղեցեաց. և երբեմն շարժական կ'ըլլար. այս-
ինքն սեղանն և կուռնն մէկտեղ փոքր ծած-
քով կամ առանց անոր՝ վերցընելով տեղէ
տեղ տանէին, ինչպէս քրիստոնեայք այլ
պատերազմի ատեն շարժական սեղաններ :
Բազին բառ շատ հին ազգաց մէջ լսուի, —
ինչպէս Bog Սլաւեանց որ աստուած նշա-
նակէ, ըստ մեզ Բող կամ Բագ զանաւ,
յորմէ և Հոռ-Բագ (էջ 103), հին պարսիկ
լեզուա Բագա (ինչպէս գրուի ի բեւեռաւ-
ձանս Պերսեպոլեայ), յորմէ և Պանիստան
կամ Պիհիսդուն լեւոն, իբր Բագաստան.
նոյնպէս և Հնդկաց հին գրոց Բագա (Bha-
ga) կոչուած շատուածն, և Բագուան՝ ի-
րենց վիշնու և Սիւա շատուածք. Բագու
կամ Բագուէ մեծ շատուածն փառաքանց,
Բագուս կամ Պագուս՝ մեհնանք Չինաց,
Հնդկաց և Սիամաց. — կարծել տայ, թէ
և. նախ քան Պարթեւաց տիրելն ի Հայս՝
ծանօթ էր մերայոց, այլ առանց ատեն ա-
ւելի յաճախեց, ուրիշ պահլաւի անուանց
հետ, և իբր օտար՝ Ագաթանգի թարգ-
մանին հարկաւոր համարեր է նշանակել,
թէ Բագասան՝ Դից աւան ըսել է, Բա-
գայառի՝ Դից գիւղ : — Սասանեանց տի-
րապետութեան ատեն՝ Բագին կոչուեցան և
պաշտելու կրակի սեղանք, որոց վրայ փոքր
փորուած մ'այլ բաւական էր կրակն ընդու-
նելու, և ըստ այնմ փոքրիկ բազինք այլ
շինուէին, կանգուն կամ շարժուն :

Յաշտից տեղիլք. — Զհարանի նշանա-
կութեամբ ըստ պարսիկ Յաշտ բառի, ծանօթ
են ի Հայս ի Տարօն, ուր այդ պաշտօնա-
րանները՝ Վաղարշակ յանձնեց Հնդկի Գի-
տանեակի, ըստ Զնոյմայ պատմութեան, և
տեղին՝ բնակարանաց հետ կոչեցաւ Յաշ-
տիշատ, որ երբեմն թարգմանութեամբ այլ
կոչուի Մեհնեագեօղ. Հնդկիք՝ Աշտակա կո-
չէին իրենց նախնեաց նօսիրուած պաշտօնա-
րանք, և Եւաշտանիս՝ զարժանաւորն պաշտա-

ման կամ սրբազանն ¹. — Յաշտ նշա-
նակէ թէ զբազինն և թէ անոր վրայ նուե-
րածը կամ զոհը. երկու անուանքն այլ թէ
և ընդունուած են ի հաւատս հին Հայոց,
բայց ասոնց հասարակ լեզուա նօսիրաց և
զօհից յատուի տեղն Սեղան կ'ըսուի, ինչ-
պէս և կերակրոց գնելի տեղն կամ շի-
նուածն. բառին ծագումն անշուշտ Սեղ պիտի
ըլլայ, բայց իմաստն անյայտ ² :

Սեղան անուան կազմութեան նման է
և խոր-ան (ինչպէս և Բեր-ան), մէջը բան
մի ընդունելու յարմար դիրք մի նշանակե-
լով. և ինչպէս հիմայ եկեղեցեաց Սեղանոց
բողոքողին խորան կ'ըսուին, նոյնպէս թուի
և մեհնանք սեղանոց, և անոնցմէ անցած
անունն ի քրիստոնեական շինուածն. և ըստ
հասարակ նշանակութեան բառին՝ (պատի
մէջ) փորուած խոր տեղ մի ցուցնէ, թէ և
ուրիշ մօտեւոր նշանակութիւններ այլ ունի,
ինչպէս Վրան, և այլն. և յայտնուի որ
այն խոր տեղում զետեղուած պիտի ըլլար
պաշտելի առարկան կամ կուռն : Այսպէս
կարծուեցան և վերոյիշեալ Վանայ քարա-
կտուր սեհեկաց պատերուն մէջ փորուած խոր-
շերն, զոր այլք ստփորոց կամ տապանաց
գիրք կարծեն, նոյնպէս և Բագաուիդն քա-
րափոր սեհեկին մէջ կ'երեւի խորունկ զոգ մի
և կուռքի մի խորան համարուի : Այսպիսի
բան մի կրնայ իմացուիլ և թովմայի Ար-
ծրունոյ ըսածն Բ Արտաշիսի համար, որ
Վանայ մօտերը երեք բլրոց զոգաձեւ հովտի
մի մէջ շինեց « Աշտարակ քարձրաձեւ փո-
» ռաձաժոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգ-
» նէ զԱստղիկան պատկերն, և մօտ նորա
» տուն գանձաւ պաշտպանութեան կողմն » —
Գանձմէրն զկուռս պաշտպանէին, թէ կուց
վայլէր զգանձս պաշտպանել, իրենց թողունք.
բայց յայտ է որ ամեն Կառաւանց մէջ կամ

1. Ըստ Պիւռնուֆայ նշանակէ, Digne qu'on
lui offre le sacrifice. ըստ իրօզնայ՝ Sacris ce-
lebrandis.

2. Հին բառգիրք մի կ'ըսէ Սեղա թամբ, նշա-
նակէ. եթէ ի Sella լստիս բառը չէ արտաբե-
րած, որ թէ ձիոյ թամբ նշանակէ, թէ արթնակ
մի. և ըստ այսմ յարմարի Սեղանոց :

քով՝ կային և գանձարանք, պահարանք նույն-
րաց մեծամեծաց և փոքր մարդկան, ինչպէս
հուսաստեն Ագաթանգեղոս և Չինոյի պատ-
միչք և այլք Լուսաւորի գործերը յիշողք։


Այսպիսի տեղիք ոչ միայն ամուր և գոց
պիտի ըլլային ապահովութեան համար, այլ
և ծածուկ, միայն քրմաց և քրմապետաց
գիտելիք. և այս բանիս համար այլ երեւի՝
որ նա և նոյն իսկ մեհնանք շատ մասնելի
չէին ժողովրդեան իրբեւ աղօթատունք, և
ոչ իսկ ընդարձակք. որպէս և աչ հին եկե-
ղեցիք Հայոց. այլ ժողովուրդն պաշտօնասէր
մեհնաններէն դուրս՝ բակի մէջ կամ բաց
տեղ կանգնած՝ բազմաց զիմաց կատարէր իր
աղօթքը, նուէրքն և զահր. ինչպէս յայտնէ
և առաջին մեհնանները շատցընող աշխա-
հակալ Տիգրանին համար ըստածն, որ « մե-
» հնան շինեալ և առաջի մեհնանիցն բա-
» ցին.. կանգնել, զահր՝ ամենայն նախարա-
» րացն հրամայէ մատուցանել, հանդերձ եր-
» կըրպագութեամբ ։ Գուշակոյն ի բանէն՝
որ հասարակ և աղքատ ժողովուրդն՝ և ոչ
իսկ մօտաւային քաղաք, այլ հեռուն կեցած
իրենց պաշտօնը կատարէին, կամ հանդէս-
ները գիտէին. և հրեական տաճարին պէս՝
ի ներսն և ներքստընցն կողմն իր սրբարան,
չլսեմք (Սրբութիւն Սրբոց) միայն քահա-
նայից և աւելի բարձր ու ստորին պաշտօ-
նէից մտանելի էր։ — Չինոյի (և ըստ իր
բանից Յայսմաւորը) վկայեն՝ Տարօնոյ Յաշ-
տիշատի երեք հուշակաւոր բազմաց (մեհնաց)
համար, որք էին « Բարձրաշէնք, և մե-
» ծամեծ ծախօք զարդարեալ յուսկոյ և ար-
» ծաթոյ և՛ մարգարտաց և յակնաց պատուա-
» կանաց ». բայց շուտը մեծագոյն կամ ընդար-
ձակ. այլ շէնքին ձեւին յատկութիւնն կ'ե-
րեւի թէ՛ իր ըսածէն և թէ թ. Արծրուն-
ւոյ, որ Բարձրաշէն և յաւարակաւ էին ըլլալն
էր։ — Մարգարէն այսպիսի՝ շէնքն Ասո-
րեստաննայց Յիշարատեք աշտարակաձեւք, զոր
տեղ մի յիշեցինք Յիշարատի մոլորակ կամ
աստեղ առթիւ (30)։ — Ինչպէս այլ ըլլան՝
մեր. պատմյաց ըսածէն այլ յայտնուի՝ որ
բազինք արտաքին մեհնան կըրնան ըսուիլ,
և աշտարակաձեւ բարձրութիւնն իրենց վրայ
կանգնած կուգրերը բազմութեան տեսանելի

ընելու համար. իսկ բուն մեհնանն յարմարի
ներքին կոչուելու, ինչպէս որ հիմայ յիշուած
Յաշտիշատի պաշտօնարանաց մէջ՝ պատմին
զնեքինքն Սենեակս կոչէ. շատուածոյն և
իր քրմաց համար կարեւոր չէր տեղոյ ըն-
դարձակութիւն։ — Վերոյիշեալ վիսնայ և
Բագատիճոյ քարափոր սենեակներէն զատ,
Այրարատ աշխարհին մէջ այլ՝ մէկ քանի
տեղ փոքր շէնքերու հին մնացուածք՝ մեհն-
նից տեղիք կարծուեցան. ինչպէս Քասաղ գե-
տոյ մօտ Չամբրու գիւղի քով քարաբլրի մի
վրայ տեսնուէր մեր օրերուս, բողոքակ քա-
րաշար բակի պէս տեղ մի, ի միջակին կոտ-
րած խարխիս կամ սիւն մի. որոյ մէկ ե-
րեսին վրայ քանդակուած էր տղայակերպ
անձ մի բազկատարած, ոտից ներքեւ երկու
պնակաձեւ փորուածք, միւսին վրայ՝ փաթու-
թած գծեր։ — Արագածու Այց գիւղի մօտ
այլ լեռին մէջ փորուած է խոր տեղ մի
մատրան ձեւով, հանդերձ խորանաւ, որոյ
մէջ կանգնած է սիւնակ մի, երկու կողմերը
կիսաբոլոր խորշեր, և քանդակապատկերք մարդ-
կան և կենդանեաց։ Ասոնց նման տեղիք
յիշէ զասոնք տեսողն (Յովհ. Շահաթում-
նեան) նա և յԱրմաւիր և յԵրուանդակերտ,
որք արժանի են նոր քննութեան և նկա-
րագրութեան։

Եթէ այսպիսի անծանօթ և անկարծելի
տեղուանք խնամով քննուէին, գուցէ դեռ շատ
հետք երեւնային հեթանոսական պաշտօնա-
րանաց, քան թէ յայտնի և բացօթեայ տե-
ղերու շինուածք, որք երեւելի ըլլալնուն հա-
մար այլ՝ շուտով աներեւոյթ եղան զօրու-
թեամբ խաչին Քրիստոսի և ձեռքը Լուսա-
ւորիին և Տրդատայ, որոց տարածներուն միայն
գլխաւորները յիշած են պատմիչք, միւսներն
այլ մէկ ամենայն բառով կ'իմացընեն. որք
եթէ Հայոց քրիստոնէական տաճարաց բազ-
մութեան հետ մոտածուին, նոյնպէս բազմա-
թիւ կըրնան եղած ըլլալ. բայց ինչպէս ը-
սինք՝ ոչ մեծ և ոչ նշանաւոր, և աւելի
ուխտատեղեաց զիմոյ երեւին մեր հեթանոս
նախնարը՝ քան առանձին աղօթականք. միզ
այլ հարկ է այդ նշանաւոր տեղիքը քննել.
որ և ի կարգի բանիցս շատ անգամ յիշուե-
ցան. մանաւանդ ամենէն երեւելին՝ կամ

այսպէս նշանակուածն ի պատմաց, Յաշտի-
շատ. որոյ և անունն վկայէ. շատ մեհեան-
ներ, պաշտելի և պաշտող ունենալ, և ա-
նոր համար շուրջ պատող բնակութեան տեղն
այլ մէկտեղ կուրի այդ անուամբ, և նշա-
նակէ՝ ինչպէս որ գրուած այլ է՝ Մեհենա-
գեօ, քան թէ ըստ յոյն բնագրի Ագաթան-
գեղոսի՝ շատապաշտ Πολυψωτος, յորմէ և
լատինն Sacrificiis abundans. և այս բա-
նիս համար կ'ըսուէր Քոռն տեղի մեհեանաց
Հայոց. նոյնպէս և ի տիրել քրիստոնէու-
թեան՝ Եկեղեցագեօ անուանեցաւ. և ինչպէս
տեղւոյն տէր էր քրմապետն, նոր տէր այլ
եղաւ քահանայապետն Հայոց (Ս. Գրիգոր),
յորմէ ժառանգութեամբ ինչա ի Ս. Սահակ.
որոյ և բնիկ կալուած կուրի, ուր և թա-
ղեցաւ իսկ մարմինն, իբրեւ յետին ժառանգ
պահելով զայն իրեն. Եւ ինչպէս մեծագոյն
կրօնական հանգէսը Հայկազանց հօն կատա-
րուէին, այսպէս նոր կրօնապետն (Ղուսաբ-
բիշ) հաստատեց հօն կատարել եկեղեցական
ժողովքը: — Յիւնցիքն քանի մի ուրիշ մեծ
և յաճախեալ պաշտօնարաններ՝ որոց շըր-
ջաբնակ տեղիքն այլ անոնց պատճառաւ կը-
շուեցան, Բագաշատ, որոյ և գաւառն ողջոյն՝
Բագրեանդ, ուր աշխարհախումբ ազգային
տօնք և հանգէսք կատարուէին Նաւասարդի
Ամանորայ օրերում (էջ 152): — Բագա-
րան, զոր շինեաց Երուսաղէ և հօս փոխա-
ղեց զժողով զից Հայոց յ'Արմաշարայ. սա
առաջին մայրաքաղաք ըլլալով՝ յայտնէ որ
առաջին և մեծ կրօնատեղին Հայկազանց
կամ կրօնական պետութիւնն այլ՝ քաղաքա-
կանին մօտ և աթոռակից էր, ինչպէս յետոյ
եղաւ և Արտաշատ նոր մայրաքաղաքն — Բագ-
աթիձ, նոյնպէս Բագնաց կամ Գից գեօզ, ի
Դերջան գաւառի Բարձր Հայոց. Ինչ պատճա-
ռաւ սա զիցապաշտութեան զիսաւոր կենդրոն
եղած է. — Թուի թէ իբրեւ մօտ և առաջին
բնիկ սահման Հայոց երկրի, Արտաշեսի և Տի-
գրանայ յարեմտեց բերած յաճախան շաս-
մար դատեր են այն կողմը, որ գրակեց և
աւելի ծանօթ էր այնպիսի զից. որոյ և ե-
րեք գետնափոր մեհեանները յիւնցիքն, և
անոնց մօտ լեռան վրայ մեհեանատեղի մի:

Դերջանայ սահմանակիցքն Եզրնկայ, Անի
թորդան, Սատաղ, այլ նոյն վիճակն
ունեցեր են: Ետքինիս մէջ գտուած Ար-
տեմիան կամ Անահիտն ամենէն նշանաւոր
մայրորդն է Հայ զիցապաշտութեան, և մի
ի մնացորդաց հիւննական ճարտարագործու-
թեան: Յիւնկայ գտուած է նա և այս քարեղէն
քանդակս, որոյ առաջին նայուածքով՝ առիծ-
ներն՝ Ս. Իգնատ. Աստուածազգեացը կարծե-
ցրեն. բայց բազկաբաց անձին կերպարանքն՝
հեթանոսութեան նշանը յայտնէ: — Իսկ ի
թորդանայ մօտ հիմայ յԱլագ վանս պահուի
Դեղրափ կուրած քարեղէն քանդակ մի որ
այլ աւելի զիցաբանական շոշորդ ունի. միայն
թէ պէտք էր աւելի ճշգրտեամբ և լուսա-



Քանդակապատկեր ի սահման Եզրնկայ.

տպութեամբ հանել պատկերը, զոր մենք մեզի
խաբուած մատիտով և թանաքով զծագրածէն
ներկայացընեմք:

Բագաւան. — Կուրած է և Պագաւի սահ-
մանն, ատենօք Հայոց 15 աշխարհաց միոյն՝
Փայտակարանի՝ գաւառ մ'էր. որոյ պաշտելիքն
այլ գետնէն կու բղիւր, ծանօթ բոցափայլ
և հրանիւթ Նաւթն: Երկրին մէկ մասն այլ
առանձին գաւառ և անուն ունէր, Եօրեփա-
րակեան քաղիք, որ ինքնին յայտնէ ինչ
ունենալն այլ, եօթն փոքուած բաղին, լոյծ
կրակն բնդունելու իբր զհրապտութեամբ
արուսնան հրապաշտեց: Ոչ ատենք՝ այլ ա-
ռալ յիշուած մեհեանքն և քանի մի անծա-
նօթք այլ՝ լրացընէին զ'Եօրե քաղիք մե-
հեանաց Հայոց, ուր յորդորէր խոտրով արքայ
հայրն Տրգատայ, և Սիւսաւոր լինել պատ-

» կերպաց կողմ դիցն պաշտաման... զիւր ազ-
» զին Արշակունեաց զհայրենեացն պաշտա-
» մանց տեղիսն մեծարէր », ըստ Ագաթանգ.
հաւանորէն ասոնք ի Յունաց բերեալ կողմ
դիք էին. իսկ եօթն ըլլալն՝ կրնայ Ագա-
թանգեղոսի յիշածներէն և վկայութենէն այլ
հաստատուիլ, կրնայ և եօթն թուոյ սըր-



Դեղրապի.

բազան համարութիւն նա և առ հեթանոսս,
ինչպէս և հին Հնդկիք ունէին իրենց Մա-
հալափուրամը, որ թարգմանութի եօթն բա-
զինք. Պարսիկք իրենց եօթն մեծ Ատրու-
շանները, նոյնպէս կապպագովկացիք եօթն
բազին կրակի, և այլն, թո՛ղ Յունաց եօթն-
ամեայ դից պաշտամունքը:

Ինչուան հիմայ ըսածներէս յայտնին՝ տես-
նուեցան կողմ նիւթերն այլ, թէ՛ պատուական
մետաղներէ, որք Յունաց ճարտարաց ձեռա-
գործք են, թէ ի փղոսկրէ, թէ պղնձեայ և
թէ ի հասարակ նիւթոյ քարանց և փայտի.
որք հարկաւ աւելի շատ էին և ի շատ տեղ,
որոց համար կ'ըսէր Լուսաւորիչ Հայր մեր
առ Հայս, ըստ Ագաթանգեղի. « Որպէս և
» առ ձեզզ իսկ տեսանէաք զՔարասպաշտ և
» զՓայտասպաշտ մոլորութիւնսդ, որք առ տգի-
» տութեան ի ձեռք նկարեցան... անշունչ
» անմուռն փարանց երկիր պագանէիք »:

Յետին խօսքն, ինչպէս ուրիշ տեղ այլ յի-
շեցինք, կրնայ զուտ քարասպաշտութիւն այլ
նշանակել, բայց առ ինովն յայտնէ ձեռագործ
կուռքեր, տաշած և քանկակած. և եթէ ը-
սածն ըստ րաոից ճիշդ ուզենք իմանալ, ի
ձեռքն ցուցնէ՝ Հայոց ինքնին իրենց արուես-
տաւորաց ձեռքով հարներն իրենց պաշտելի-
քը. որոց ճարտարութիւնն այլ ի քարագոր-
ծութեան՝ յայտնութի քրիստոնէական շինուածոց
վրայ ի Ե զարէ մինչև այսօր. և ակներեւ
վկայ կան Ալլարատայ և Շիրակայ եկեղեցիք
և մանորայք: — Մետաղներէ ճուշածոյ
պատկերք՝ իբր զուտ հայկական ձեռագործ,
ի Յունաց բերուածներէն զատ, կարծեմ յի-
շուած չէ, թէ և չէ անհաւան: Իսկ մանր
զիցքարանական քանդակներ՝ պղնձեղէն նաեւ
սակեղէն, թէ ձուլուած թէ դարբնած՝ գտուած
են ի Հայս, մանաւանդ ի կողմանս վան-
սոսպայ, որոց վրայի պատկերքն՝ ամանց ա-
սորեստանեայ կերպ երեւին. բայց քանի մի
հատ գտուած կենդանեաց կամ մարդկային
պարզ կերպարանք և զարդաձեւք՝ չեն կրը-
նար անոնց յատուկ ըսուիլ. կրնան, և հա-
ւանելի այլ է որ ըլլան և Հայկականց. որ
աւելի կու ստուգուի՝ եթէ աւելի այլ յայտ-
նութիւն այդպիսիք, մանաւանդ հողեղէնք և կա-
ւեղէնք, որք՝ զարմանք է, ինչուան հիմայ չեն
յայտնուած, գոնէ գրողին:

Բ. ՊԱՇՏԱՍՏՈՒՆՔ. — Ամենայն կրօնից
մէջ պաշտօնաբանն կամ տաճարն՝ իր հա-
ւատացելոց ժողովարան է, առանձին կամ
միաբան նուիրելու իրենց ճանդած աստու-
ծոյ՝ նախ իրենց խոնարհութիւնը որ է ըսել
ճանշնալն անոր զբարգոյն մեծութիւնը, իշ-
խանութիւնն և երախտիքն իրենց վրայ, և
զայս նա եւ բերնով խոստովանիլ, որ է Ա-
ղօրք, երգ, գովառքիւն, և այլն: Երկրորդ,
նիւթական բան մ'այլ նուիրել Աստուծոյ
կամ աստուածոց, որ է և կերպով. և այս
է Ձօն, Պատարագ, Զոհ, Ողբակոչ, և այլն,
իսկ զայս նուիրելուն և կատարելուն կերպն՝
ինքնին կամ ի ձեռն պաշտօնէից՝ է Ծիս,
օրհնք, և այլն:

1. Առաջին կերպին վրայօք բան չեմք
կրնար ըսել, շունենալով և ոչ տող մի ա-
զօթական բանից հեթանոս նախահաղբ մե-

րոց. այլ՝ թէ՛ ժբ և է կերպով մի աղօթէին և խնդրէին յաստուածոց, յայտ է օտարաց՝ Ս. Գրոց յիշածներէն՝ առ Բահադ կամ առ ուրիշ կուսս ըրած աղաչանքներէն, նոյնպէս և Պօղոս առաքելոյ զդուածներէն և խօսածէն առ անհաստառ և հաւատացեալս : Պատմութի մեր Բ Արաւելս կենցաղատէր Թադաւորին համար, որ փափագելով դեռ երկարել աշխարհքի վայելքը, կամ ուրիշներն զինքը վայել ուզելով, զրկեց նախարար մի (Աբեղոյ) և յիկեղեաց (գաւառ) յերեզա, ի մեռ հեանն Արտեմիդայ, ինդրել ի կոնց բժշկ. և կուրիւն և բազում կեանք » . (զոր շտապեալ, չէր կրնար ոչինչ ինչ տալ) : Թադաւոր և ծառայ, հարուստ և աղքատ, եթէ կրօնասէրք էին՝ յայտ է թէ և աղօթէին, իւրաքանչիւր իր զիտցած կամ զգացած կերպով : Այս քննել չէ մեր խնդիրն, այլ թէ կային սահմանեալ կամ շարադրեալ կարգով աղօթք, մաղթանք, երգք, օրհնութիւնք և չաւանիմ թէ կային . և սենեակեան մատենանք կոչուած զրոց մէկ մասն այսպիսի բանք բովանդակէր, թէ աչ ժողովրդեան բերնով աղօթքն, այլ պաշտօնէից բերնով ըստածքն . մէկ մասն այլ՝ ըսելու և լսելու կերպը կամ ծէսը, հանդերձ ձեւերով կամ շարժմամբք : Թէ ի՞նչ տեսակ սնոսի և խալտառակ գրուածներ կային այդ մատենից մէջ՝ կրնայ գուշակուիլ, ոչ միայն անոնց ջնջուելէն՝ ի ծագել քրիստոնէութեան, այլ և մեր քանի մի տեղ յիշած պղծարական աղօթքներէն, որք թէ և յետոյ ի քրիստոնէից շարագրած են, բայց հեթանոսական հետք և հոս ունին : Յայտնի է և Բարդուան պաշտօնաւորին ըրածէն (յի գաւառ), որ Հայոց այգպիսի մեհնական զրեքը կարգովով՝ անոնց հակառակ զրեք . այս գրուածներն Էդոց պաշտաման և Բաշիսից վրայօք էին . և կ'երեւի թէ կարգով և ոճով մի գրուած էին, որ արժանի եղան ընդդիմարան հերքման, թէ և ի հերքելի անձէ : — Ուրիշ տեղ այլ յիշուին սենեակեան պատմանք, նման իմն մեր եկեղեցեաց, զիւանաց և կոնդակաց (ի ռամկաց քիսթիկ կոչուած) . այսով այլ յայտնուի, որ եթէ ի մեհնաւա պատմական գրուածք պահուէին, գրչափ եւս առաւել յիսականք :

2. Այս անուամբ կ'իմացուի պաշտօնաւորն մէջ պաշտօնէի ձեռքով որպիսի և է կրօնական գործ մի կատարել, որ սովորաբար աւարտողորէն կ'ըսուի . բայց առջի բառին արմատն միախառնելով՝ յիսակ հնուածն է թէ արժէ քննութեան լեզուագիտաց . մեզ անծանօթ է օտար լեզուի համաձայն բառ, բայց եթէ յիս և յիսա (թէ և զայիւ հընչուած ի Յունաց Ձեւ) Արամապայ անունն, իբր կենսատու . Հարկ էր որ ծիսից վարդապետութեան գիրքն այլ կոչուի յիսաբան . բայց այս բառս գործածուած չէ ի գիրս, այլ անոր տեղ կ'ըսեմք և յայտնի է մերայոց՝ Մաշտոցն : Սա Ս. Մեսրոպեայ անունն անուած չէ, և ոչ յիս գարու այն գիրքը նորէն կարգաւորող համարեալ համանուն (Մաշտոց) կաթողիկոսէն, այլ ինքն հաւանորէն ի զրոցն առեր է անունը, որ պարզ կամ Թարգմանորէն Օրհնութիւնք կամ օրհնութիւնք գիրք կոչուի : Սակայն Մաշտոց անուոյս ի Մաշտ արմատոյ՝ հին և նախաքրիստոնէական բառ և նշանակութիւն է ծիսականաց, և այսօր պէտք հիմայ մեզ անծանօթ ծագմամբ . որոյ կրնայ գիտուիլ լծորդութիւնն ընդ պաշտ և յաշտ կրօնական իմաստից . նա և ընդ Մաշի, որով կրօնական ջրոյ ցօղմունք կ'ըլլան, և ըստ հին բառագրոց՝ նշանակէ ցանկի . անտարակոյս է որ ինչպէս ուրիշ և գրեթէ ամեն ազգաց՝ մերոց պաշտամանց մէջ այլ ջուրն իբր արիւն ցաւ, նուր և ցրուէր՝ թէ անձանց թէ նուիրաց :

3. Եթէ այս մեծ Ս. վարդապետին անուամբ կոչուելի էր գիրքն՝ վայելէ Մեսրոպ կամ Մեսրոպ կոչուիլ (այս այլ անծանօթ նշանակութեամբ) . կրնար Մաշտոց յատուկ անուն մ'այլ ի հեթանոսութենէ մնացեալ . մանաւանդ ի Տարսն . ուստի էր Սուրբն : Այս այլ յիշեմք որ Օրհնութիւնքն ցուցակն . որ է ցանկ կանոնաց կամ կարգաց Մաշտոց գրոց՝ Ս . Սահակայ կ'ընծայէ անոր կարգաւորութիւնը՝ ձեռամբ կամ գրչութեամբ Մովսիս Խորենացոյ, և ոչ Մեսրոպայ :

3. Մաշտոյ՝ հին բառ մ'այլ կայ Հայերէն, որ գիտեմք մագերուն Թափել, ճաղատ ըլլալ նշանակէ . ասկէ շեմք կրնար հետեցնել զՄաշտոց :

Ջրով կրօնական արարողութեանց մէկ յայտնի նշանն այլ է Զորս յոսարեն, զոր յիշած եմք :

Մշտտոց գրոց պարզագոյն անունը յիշելով՝ (Օրհնութիւնք) նոր նշանաւոր բառ մ'այլ կ'եղնէ մեր առաջ. որոյ արմատն՝ թէ և ուղղական գտաւած չէ Օրհնէ, բայց կայ հռչակեալ յոգնականն Օրհնից, և ի բարգաւթիւնս՝ Օրհնէք (ինչպէս Զորհնէք, և այլն) : Յիշելի է որ ըստ հին վերծանողութեան ոչ ոս այլ առ կարգաւոր է, Աշհնէք. և զարձեալ քանի մի բաղաձայն տառից իրարու քով զուգուիլն՝ ձայնաւորի պէտք ցուցնէ, զուցէ և տառն այլ իրեւ իմաստին զօրացուցիչ ըլլայ, ինչպէս ակն, հիւն, և այլն. և այսպէս ենթադրելով՝ թերեւս զանդիկ աստուածական անհրաժեշտ բառի զուգուի : Ինչպէս այլ ըլլայ հաւանելի է՝ որ օրհնութիւն բառն այլ հին է և ի հին Հայոց հաւատոց :

3. Թողով զմասաւորականն և զձայնական, քննենք զնիւթական ընծայեալս առ պաշտօնիս, զոր ընդհանուր անուամբ Նոռէր կոչեցինք : Եւստ անսակ և շատ նիւթէ կ'ըլլան և եղած են առ զիս արուած նուէրք, որք շատ հեղ այլ մեհնից մէջ կամ խորանաց վրայ պահուելի հաստատ նիւթեր էին, ինչպէս և անտաղեայ զարդք կամ պատկերք. և զուցէ այն տեղ կ'ախուելուն համար՝ այսպէս կոչուած են պարսիկ բառով՝ Նիւպար, որ նշանակէ պարան, չուան : Ունի՝ արդեօք յարընչութիւն և զանդիկն Հոնովք, որ նշանակէ կրակի նուիրման կամ պաշտաման ըստած աղօթքը :

4. Նուիրաց հասարակ և հիմայ սրբազանեալ անուն է Պատարագ, և այսոր ընդունելին ի քրիստոնէական ծիսի՝ յայտնէ որ հին հաւատոց մէջ այլ այս էր հասարակ և զխաւոր անուն նուիրմանց. Ս. Գրոց մէջ այլ այսպէս ամեն կրօնից նուիրաց համար կ'ըսուի : Բառին յատուկ նշանակութիւն կ'ընայ ստուգուիլ ի բարբոթութեանց ինչպէս [խապատար, յուսապատար, և անմանցամբն՝ պատարոն. ամենն այլ շատութիւն, լիութիւն նշանակողք, ինչպէս կու վայելէր նուիրել Աստուծոյ կամ զից. կայ և առանձին ըստած Պատար սիրոյ, (Ոսկիբ, Մեկն. Ե. փես. 880) : Այս մասը (լիութեան) կ'ըրնայ եւս

զուշակուիլ՝ որ պատարագի նուէրք ի սկզբան ոչ զոհք էին՝ այլ բուսական բերք, որ առատապէս մատուցուէին, յետոյ ընդարձակեցաւ իմաստն՝ ամենայն տեսակ ընծայից վրայ, նա և կենդանեաց և զոհելեաց. ըստ այսմ՝ գուցէ կարելի ըլլայ կարծել յարընչութիւն Պատարագի և Պատարագակի, որ սովորական զոհելին էր :

5. Ս. Գրոց վկայութեամբ այլ գիտեմք, որ առաջին նուէրքն երկրի անշունչ բերոց հետ՝ շնչականքն եւս էին (կենդանիք), ըստ պատմութեան պատարագաց Աբելի և Կայենի. և որպիսի այլ պօղպղի է բնութեան՝ կեանք մի փնացընել, ըլլայ մորթելով ըլլայ այրելով, չէր կրնար մարդ ուրիշ կերպով բուրդովն իրմէ հեռացընել, զինքը զրկել այն նուէրքէն, բայց եթէ կերպով մի ոչնչացընելով զայն. և մանաւանդ իր կեանքը Աստուծոյ նուիրելու համար՝ աւելի մերձաւոր բան մի չկար՝ բայց ուրիշ կեանք մի, այնպիսի կեանք՝ որ պարզայ մի չունի, թէ շատ թէ քիչ ապրի՝ յետոյ պիտի ոչնչանայ. այսոր համար թոյլ տուաւ Աստուած հին օրինաց մէջ այսպիսի նուէրք, որ կ'ըսուի Զոհ, իսկ այրածը՝ Ողբակեզ : Սակայն ամեն բանի մէջ մոլորող հեթանոսք՝ անբան կենդանեաց հետ՝ բանականն և հոգեաւորն այլ, իրենց նմանը, զմարդիկ այլ զոհէին, նա և իրենք զիրենք՝ անձնասպանութեամբ. և կամաւոր ողջ ողջ թաղմամբ ընդ սիրական կամ տիրական մեռելոց : Զոհն՝ ինչպէս անունն այլ յայտնէ՝ ի սեմական ազգաց երեւի մտած առ Հայս. Արարացիք Զահայա կ'ըսեն, Երբայեցիք Զվախ, Զանդիք այլ քիչ մի նման Զապրա :

6. Յաշտ բառի նուիրական իմաստը արդէն բացատրեցինք, և ի Հնդկաց ծագումն, որ յետոյ միացեալ կ'երեւի ընդ Եւրասիաց որ է Եւրասիա Պարսից, առ մեզ Յաշտ, որոյ արմատն է Յազ, և զտուի անշուք բացատրութիւն ի գիրս մեր, որպէս և յազել, իբր զոհել զկենդանիս, ինչպէս և Պարսից Եւրոնա և Հնդկաց Եւրոնա. Մագդեգն զրուածն այլ առ մեզ՝ Մագդեգնազն զանդիկն՝ նշանակէ զոհող Որմըզդի. նոյն անուամբ ձեւացեր է և անոնց իգեչկեանն՝ որ պաշտօնաբան նշանակէ :

7. Զօն. Զօնիքը. — Տեսակ մի նուիրաց երբեմն և ընդհանուր ամեն տեսակի յատկաբար. երբեմն նշանակէ պատկաց նման նուիրուած բաներ. երբեմն այլ անձինք նուիրուած ի պաշտօն դից կամ ի պահպանութիւն նոցա. ինչպէս տեսանք զԱնուշաւանն հայկազնայ՝ « նուիրեալ ի Սօսիսն Սրամե. » նակայ՝ որ յԱրմաւիր, որոյ համար և Սօսանուէր: — Անունն (Զօն) եկամուտ թուի առ մեզ. նշանական է (թէ և բլլայ պատահական) որ թուրքերէն սոսանագ ծիղ ձօնել նշանակէ:

Թողլով նուիրաց այլեւայլ անուններն ալ քննել, աչք մ'այլ դարձնենք նորէն անոնց նիւթոց վրայ, որ և անուանց պատճառաւ արդէն յիշուեցան. և որոց առաջին համարինք զԲուսականս, թէ զԱրմաւիր (ինչպէս Յորեն, Գարի, և այլն), իբր յատկագոյն մարդոյ տուրք՝ իր արդեանց պտուղ, և թէ Դադկոնք և պսակք գեղեցիկ տերեւներով հիւսուած. ինչպէս Տրդատ կու հրամայէր Գրիգորի, « զի Պսակն և թաւ ռստս ծառոց՝ » նռաքա տարցէ բազին Անահտական պատ. » կերին: — Իսկ ի կենդանեաց՝ նախ ա. նոնց բերքն նուիրուէին, կաթն և խոցն, ասորն կամ գեղմն. յետոյ և իրենց մարմինն և կենսակն վերոյիշեալ Զօնից կերպով. և ամանց ձագերն նուիրուէին, որ երբ մեծնան՝ զոհուին, ինչպէս յիշեցինք սոյն Անահտայ համար յերէզ. որոց մինս բաժնուէր քրմաց, աղքատաց և պանդուխտ հիւրոց. մաս մ'ալ այրելով՝ իբր միայն դից նուիրուէր: Յայտ է որ այս կենդանիներն օտար կամ ուսելի. ներէն էին, ոչխար, երինջ, և այլն, նոյնպէս և ի թռչնոց: Թագաւորք և հարուստք առատապէս կու տային այսպիսի զոհելի կենդանիներ, քրմաց ապրուստի համար. այնպէս որ երբ անոնց կոնքն ջնջուեցաւ, անձարակ մնալով՝ հարցուցին Լուսաւորչի, թէ ինչպէս պիտի ապրին, զի ուրիշ արուեստ չէին գիտեր. Սուրբն այլ սահմանեց փոխանակ հեթանոսական զոհից՝ քրիստոնէական Ալսապն և Մատաղն, առատ մասն հանելով քրիստոնէացեալ քրմաց, և յետոյ քահանայից: Մատաղ ստուգաբանի յումանց աղ մատոգաներով օրհնուած նու-

էր. կրրնայ նա և հասարակ նշանակուածեամբ մատաղ կենդանի նշանակել, կամ ասլինեկ, ինչպէս Եբրայեցոց այլ պատուիրուած էր՝ այսպիսիներ նուիրել Աստուծոյ կամ քահանայիցն: Ս. Սահակ իր կանոնաց մէջ կ'ըսէ, թէ իր նախնեաց աւանդութենէն ստուածն է զայս, և ըստ կարգադրութեան իր նախահօր (Ս. Լուսաւորչի), սահմանէ որոշակի՝ թէ որ մասն կենդանոյն տալու է քահանայից և որն այլոց, որպէս զի հակառակութիւն և անվայել ինչոյր չլլայ: — Հեթանոսք բաւական չհամարելով այս ընտանի և տնտեսական կենդանիները՝ գրաստեղէններն այլ զոհէին. ինչպէս կ'ըսուի և մեր Տրդատայ հօր Խոսրովու համար, որ յետ վանելու զՊարսիկս՝ իբր յաղթանակելով և ուզելով զոհուիլ ինքնուրոյնակել իր օգնական շատուածոց, « Սպարակ Յիշաք և սպիտակ » Նոխազոք, սպիտակ Զոհվք և սպիտակ » Զորովք. « հայրենեացն պաշտամանցն տե. » զիսն մեծարէր: » Դիտելի է այս նուիրական մեծարանաց մէջ պախելից և գրաստուց սպարակ և առաւ բլլալն. զուցէ շատուածոց սեռին համեմատ, մինչ Անահտայ երինջ կու մատուցուէր:

Եիշեցինք անցողաբար և զպժգալի մարդազօհս, թէ զկամաւորս (ինչպէս ի յուզար. կուտրութեան Արտաշէսի), և թէ օտար ձեռօք, ակամայ և բռնութեամբ. ինչպէս շատ անգամ յիշեալ Անեւացեաց կողմերու քարայրներու մէջ՝ որջացեալ իրաւ կամ խաբէական վիշապաց՝ Լոյս աղչիկներ և անմեղ պատանակներ զենուլ զոհէին, որոց արեամբ զուարմանային և բազոքն՝ զեւքն, կ'ըսէ պատմիչն, փոխանակ բտելու՝ զխակերպ քուրմն: Եիշեցինք և Պրատարքոսի պատմածն՝ Սիկիպի սեւ քարի (Σικίον) առթիւ, զոր մարդազոհութեան համար ի գործ ածէին, և իբր թէ անոնց զարնելով՝ զոհելոց արիւնն յորդ հոսեր. և որոց համար նախատելով զեր յիշեալ Անահտ մարգապեան, թէ « Բուսութեայք հեթանոսական յիմարու. » թեամբ և կաշկանդեալ կապանօք ի տենչանս » սրոյ ? զազարայից ճնննեաց, ընուին զյա. » տակս պղծայիցն յարկաց՝ արեամբ իւրեանց » ուստերաց և զստերաց: » Սակայն չեմ

կարծե՛ր որ մարդագո՛նութիւնն այնպէս հան-
դիսական եղած ըլլայ ի Հայս՝ որպէս առ
Սեմականն և առ Հին Գաղղիացիս, այլ ա-

ւելի ծածկաբար, ինչպէս յԱնձեւացիս և ի
Բութ եղածնն տան գուշակել:
Շարայարելի

ՏԱՐԷԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ի Լ Ա Խ Ա Յ Ե Ի Օ Լ Ա Խ Ա Յ Ե Ր Կ Ր Ի

(Տես յ'էջ 390)

ԿՐԻՒԱԿ ՄԵՍՐՈՂԳԱՅ ԿԱԹՈՒԿՈՍԵԱՒ ԼԵԱՎԱՅՍ



ԵՐ Միարդ կարողիկոս ամենայն Հայոց. Ձոր գրեմք յամենաբոնեայ
յակահառոր յաստուածապահ մեծ և գովելի մայրաքաղաքոյ, ի Լաւփյ
և յԱյաստեմիրդ, ի Լուցկայն, և ի սահմանեայ վիճակ իւր, ի գեղ և ի վանո-
րայք ի միասին*. Որոց պղոցիկ առ հասարակ բնակչացդ՝ մեր ի Քրիս-
տոս Աստուած հաւատացեալ սիրելի ըստ հոգւոյ որդոց. Պատվական և
սրբասէր քահանայից, աստուածասէր և գովելի պարոնացդ և խաւնայ-
նոյդ, հարկեոր և բարէպաշտ տանուտեբացդ, իմաստուն և փառաւոր
վայճառականացդ, քաղաքայնոցդ և ճանապարհորդացդ, ձեռնահրմուտ
արվեստագիտացդ, աշխատասէր հողագործացդ. և ամենայն հայասեռն և
քրիստոսադավան մերոց ժողովրդականացդ, մեծամեծացդ և փոքունցդ,
արանցդ և կաննանցդ, ծերոցդ և տղայոցդ, երիտասարդացդ՝ և կուսիցդ. և
ամենայն չափու հասակի. Կարողութեամբն Աստուծոյ Հաւր, շնորհաւք Սուրբ
Հոգւոյն, սիրովն Քրիստոսի. առաքեմք ողջոյն սիրոյ ի մէնջ, և աւրհնութիւն
առաքելական, յաստուածընկալ սրբոյ Նշանէս Վանկոյ, և ի յայլ սուրբ Նշա-
նացս, և ի բազմաշնորհաբաշխ Այլոյս Սրբոյն Գրիգորի, և յերկնահանկէտ
սուրբ աթոռոյս մեր սուրբ առաքելոցն Թադէոսի և Բարդաղիմէոսի, և ի յայլ
բազմութենէն սուրբ նշխարացս առաքելոց և հայրապետաց և մարտիրոսաց,
որք աստ կան հաւաքած. որոց արագահաս և սքանչելագործ կարաւլ զօրու-
թեամբն աւրհնութեամբն և աւգնականութեամբն՝ պահպանեալ փրկիսյիք ի
յամենայն որոգայթից փորձութեանց վընտանկից հոգւոյ և մարմնոյ, տամբ և
որդաւք և ամենայն գոյիւք. ամէն:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն իմ ի Քրիստոս Աստուած յոյժ սիրեցեալ
ըստ հոգւոյ ցանկալի որդիք, բազմաշարչար երկեամբք ծնունդք աւետարա-

* Ամենայն նորագիր բառերն ի բնագրէն կարմրագեղով են գրուած. ինչպէս և կաթողիկոս
սին ձեռնագիրն: